# Համաձայնագիր-1

05.12.2018թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/7-2 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան

«05» «դեկտեմբեր» 2018թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Կոմպլենդ» ՍՊԸ-ն այուհետ՝ «Վաճառող», ի դեմս Ընկերության տնօրեն Խ. Թովմասյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.12.2018թ. կնքված ՀՀՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/7-2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ֆլեշ հիշողության մատակարարման ժամկետ սահմանել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվուում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅԱՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | Կոմպլենդ ՍՊԸ |
| ՀՀ ք. Երևան, Մովսես Խորենացու 3 | Հասցե՝ Ք.Երևան, Դրոյի փող., տուն 48 |
| ՀՎՀՀ 02647057 | <<Ինեկոբանկ>>ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | Հ/Հ 2050622025981001 |
| գործառնական վարչություն | ՀՎՀՀ 00875953 |
| Հ/Հ 900013202016,900013574018 | Տնօրեն |
| ՀՀ պետական եկամուտների | |
| կոմիտեի գլխավոր քարտուղար | |
| *Է.Գևորգյան*_____ | *Խ. Թովմասյան*_____ |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |